Գևորգյան ճեմարան
Էլ. - պարբերական

Gevorkian Seminary
E - Newsletter

Գ Տարի, թիվ 3,
2017թ. հոկտեմբեր Ա

«ԱՅՍՏԵՂ, ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆԵՂՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՔ, ՍԱԿԱՅՆ ՔԱՋԱԼԵՐՎԵՑԵ՛Ք, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՄ ՀԱՂԹԵՑԻ ԱՇԽԱՐՀԻՆ»: ՀՈՎՀ. ԺԶ 33

ՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԶՈՐԱՎԱՐԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Տոնական Սբ. Պատարագը մատուցվեց ձեռամբ հոգշ. Տ. Գեղարդ աբղ. Հովհաննիսյանի: Ներկա էին նաև 2016-2017թթ. ուս. տարվա շրջանավարտները: Պատարագի ավարտին հոգևորականների և ճեմարանականների թափորը առաջնորդվեց երջանկահիշատակ Գևորգ Դ կաթողիկոսի գերեզմանի մոտ, որտեղ հանդիսապետությամբ ԳՀՃ Տեսուչ հոգշ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Գևորգյան ճեմարանի սաները հոկտեմբերի 8–ին մասնակցեցին Էջմիածին քաղաքի 2702 ամյակին նվիրված քայլերթին:

29.09.2017-ին ճեմարանականները ֆուտբոլային ընկերական խաղ ունեցան ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի սաների հետ:

ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Տոնական օրվա շարունակությունը իր հանգուցալուծումը ստացավ արդեն իսկ ավանդույթ դարձած շրջանավարտ ուսանողներին դիպլոմների հանձնման արարողությամբ: Միջոցառումը սկսվեց ԳՀՃ Տեսուչ հոգշ. Տ. Գարեգին վրդ Համբարձումյանի բացման առթիվ ասված խոսքով: Դասախոսների անունից շրջանավարտներին և սաներին իրենց խոսքն ուղղեցին Մայր Աթոռի միաբան, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու, ԳՀՃ դասախոս հոգշ. Տ. Շահե Ծ. վրդ. Անանյանը և ԳՀՃ Կրոնագիտության դասախոս Պարգև Բարսեղյանը: Դիպլոմների հանձնման արարողությունը տեղի ունեցավ Մայր Աթոռի արարողակարգային և արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու գերշ. Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի ձեռամբ: Միջոցառումն ավարտվեց Նաթան սրբազանի օրհնության խոսքով:

Միջոցառումը իրենց գեղեցիկ կատարումներով զարդարեցին Ճեմարանի զույգ երգչախմբերն ու Լույս հնգյակը:

Սեպտեմբերի 26-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հյուրերն էին Երևանի թիվ 109 դպրոցի 10-րդ դասարանի աշակերտները: Նրանց Ճեմարանում դիմավորեց ԳՀՃ Արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Հարություն սրկ. Քեշիշյանը: Վերջինս աշակերտներին ծանոթացրեց Ճեմարանի կրթական, դաստիարակչական, աղոթական և առօրյա կյանքին:

Հոկտեմբերի 9-ին Ծաղկաձորի գրողների տանը կայացավ Սփյուռքահայ հայագիր և օտարագիր գրողների համատեղ 6-րդ համաժողովը: Ներկաներին ողջունեց և Հայրապետի օրհնությունը փոխանցեց ԳՀՃ Տեսուչ Հոգշ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը: համաժողովի թեման էր «Ժամանակակից հայ գրողն ու հայ գրականությունը 21-րդ դարի մարտահրավերների առջև»: Ներկա էին պետական այրեր, հասարակական կառույցների ներկայացուցիչներ, արտասահմանի տասնյակ երկրներից ժամանած հայազգի գրողներ: Համաժողովին տեսուչ Հայր Սուրբին ընկերակցում էր ԳՀՃ եկեղեցական երաժշտություն առարկայի դասախոս բարշ. Արթուր սրկ. Վարդանյանը:

Ն.U.O.S.S. Գարեգին Բ կաթողիկոսի տնօրինությամբ յուրաքանչյուր երկուշաբթի Զ լսարանի սաները պետք է ուսուցողական հանդիպում ունենան Հայրապետի հետ՝ քարոզխոսություն առարկայի շրջանակներում:

Հոկտեմբերի 13-ը ԳՀՃ սաների համար մշակութային էր: Սաները դասերի ավարտին վերակացու հայրերի ուղեկցությամբ այցելեցին Փարաջանովի տուն-թանգարան, որտեղ ի մոտո ծանոթացան մեծանուն վարպետի գործերին:

Այնուհետև սաներն այցելեցին Հենրիկ Մալյանի անվան թատրոն:

Հոկտեմբերի 13-ին, Թարգմանչաց տոնի նախօրեին, Ճեմարանում ԵՊՀ-ի և Թարգամանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հետ միասին կազմակերպվել էր թարգմանության մրցույթին մասնակցած ուսանողների դիպլոմների հանձնման միջոցառում: Իսկ արդեն Հոկտեմբերի 14-ին ԳՀՃ սաների մեծ մասը և մի խումբ հավատացյալներ Մայր Աթոռից ոտքով քայլեցին դեպի Օշական: ԳՀՃ տեսուչ հոգշ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի ձեռամբ մատուցվեց սուրբ Պատարագ: Պատարգի երգեցողությունն ապահովեց ԳՀՃ «Էջմիածին» երգչախումբը:

Հոկտեմբերի 11-ին Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց ԳՀՃ Ա լսարանի 18 սաների հետ: Ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, ներկայացնելով ուսանողներին, նշեց, որ Ճեմարանի Ա լսարանցիների հետ Ամենայն Հայոց Հայրապետի ամենամյա հանդիպումը գեղեցիկ ավանդույթ է դարձել: Նման հանդիպումները ոգեշնչում են երիտասարդներին և առավել խանդավառում իրենց ուսումնառության մեջ: Այնուհետև սաներին իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հորդորեց ուսումնառության տարիները լավագույնս ծառայեցնել գիտելիքներ ամբարելու և հոգևոր առաքելության պատրաստվելու համար: Նա անդրադարձավ եկեղեցականի կերպարին՝ պատգամելով սաներին հետևել մեր Փրկչի և Հայ Եկեղեցու լուսավոր վարդապետների օրինակին և ամենայն նախանձախնդրությամբ ու նվիրումով իրենց անձերը ծառայեցնել ի փառս Հայոց Եկեղեցու և ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդի: Նորին Սրբությունը հավելեց, որ ժողովրդի հարգանքին ու սիրուն հոգևորականը կարող է արժանանալ միայն հովվական կյանքում դրսևորած իր խոնարհությամբ, նվիրումով և անձնազոհության ոգով: Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց Ճեմարանականներին՝ մաղթելով բարեհաջող ուսումնառություն հոգևոր հաստատության կամարների ներքո: Հանդիպման առիթով Հայոց Հովվապետն ապագա եկեղեցականներին ընծայեց Նոր Կտակարաններ:

FOMO ՍԻՆԴՐՈՄԸ ԵՎ ՎԵԲ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

«Աշխարհը զարգանում է», - ասում են բոլորը, ու ժամանակակից զարգացող աշխարհի յուրահատկություններից մեկը նրա զարգացած տեղեկատվական համակարգն է: Մարդը միշտ ձգտում է տեղյակ լինել իրեն շրջապատող աշխարհում կատարվող իրադարձությունների մասին և այս նպատակի համար նա չի խնայում ո՛չ ժամանակ, ո՛չ միջոցներ: Մարդու նման ցանկությունը ոմանք կապում են նախաստեղծների հետմեղանչական կյանքի հետ, որտեղ նախահայրերը պիտի լինեին մշակներ և պահապաններ (ամենայն հավականությամբ՝ մտքով) (Ծննդ. Բ 15): Հայրաբանական մեկնությունների համաձայն՝ այդ մշակումը պիտի իրականացնվեր հոգեմտավոր, այսինքն՝ վիրտուալ, ոլորտում, և ոչ ֆիզիկապես: «Տեղեկատվությունն է այսօրվա զենքը», - կասեն շատերը: Տեղեկատվությունը... Դեռ մի դար առաջ Մարկ Տվենը երգիծանքով ասում էր, որ նա, ով չի կարդում մամուլը, տեղեկացված չէ, իսկ նա, ով կարդում է, ապատեղեկացված է: Անշուշտ, այսօր մենք ունենք ավելի ստույգ համակարգ, սակայն այստեղ այլ հարց է ծագում՝ արդյո՞ք այս տեղեկությունը օգնում է մարդուն ճիշտ կառուցելու իր կյանքը, թե՞ ոչ: Այսօր մարդ իր կյանքի մի մասն ապրում է աննյութական, մտահոգոր տեղեկատվական համակարգի մեջ՝ փորձելով երբեք հետ չընկնել օրըստօրե աճող և զարգացող այդ համակարգից: Մարդն այսօր տեղյակ է, թե ի՛նչ է կատարվում աշխարհի բոլոր մայրցամաքներում, տեղյակ է աշխարհի մշակութային, գիտական, սպորտային, քաղաքական կյանքին: Ոմանք էլ, որոնց թիվը ահռելի է, տեղյակ են մեծահամբավ անձանց անձնական կյանքի մանրամասներին: Ավելին, կան մարդիկ էլ, որոնք հետևում են անգամ տիեզերքում կատարվող անցուդարձին: Մարդը փորձում է տեղյակ լինել այս ամենին, իսկ մնացած համացանցային ռեսուրսներն օգտագործում է վիրտուալ շփման համար՝ տեղյակ լինելու իր բոլոր վիրտուալ ընկերների կյանքին, իր կարծիքն ու մեկնաբանությունը թողնելու ամեն ինչում՝ ասես դառնալով տիեզերական կառավարիչն ու մեկնաբանը...

Գոյություն ունի մի երևույթ, որը բրիտանացի գիտնականներն անվանեցին FOMO (*fear of missing out, այսինքն՝ դուրս մնալու վախ):* «Վիրտուալ աշխարհի բնակիչների» մոտ շատ տարածված վիճակ է, երբ անձը ջանք է թափում տեղյակ լինելու ամեն ինչին, ինչ կատարվում է վիրտուալ աշխարհում. բաժանորդագրվում բազմաբնույթ սոցկայքերի, որոնցից մշտապես ստանում է հաղորդագրություններ, հիշեցումներ, մի խոսքով՝ դառնում այդ ամենի կամավոր գերին և շատ անգամ ժամանակ չի գտնում իրական շփման և իրական կյանքի համար: Դրան ի պատասխան առաջ եկավ մի այլ շարժում՝ JOMO (joy of missing out - *ուրախություն անտեղյակ լինելուց):* Այդ շարժման հետևորդները հիմնականում վեբ աշխարհից հոգնատանջ եղած անձնավորություններն են, որոնք մի օր հասկացան, որ իրական կյանքը կարծես անտեսված է մնում մշտական համացանցային զբաղվածության պատճառով, ինչի համար էլ ընտրեցին դրանից ձերբազատվելու ուղին: Այդպես եվրոպական որոշ ռեստորաններում առաջացան հայտարարություններ. «Մեզ մոտ Wi-Fi չկա, որովհետև մենք ուզում ենք, որ դուք իրար հետ շփվեք», - կամ, - «Վայելե՛ք իրականությունը», - և այսպես շարունակ:

Այդ երևույթներին ի պատասխան տարատեսակ մոտեցումներ առաջացան նաև Եկեղեցում, քանի որ քրիստոնյաները չէին կարող անմասն մնալ այդ իրականությունից և շատերը հանգամանքների բերումով կամ էլ հասարակայնացման արդյունքում իրենց տեղն ունեցան այդ վերբալ աշխարհում: Քրիստոնյաների ներկայությունը համացանցում հանգեցրեց այն երևույթին, որը կոչվեց «վեբ քարոզչություն». եկեղեցիներն ու վանքերն ունեցան իրենց սոցկայքերը, որոնցով իրականացնում են իրենց հովվությունը և հոգևոր սնունդ մատակարարում վեբ քարոզչության միջոցով: Դժվար է միանշանակ ասել, թե ինչքանո՛վ է դրական կամ բացասական նմանատիպ քարոզչությունը: Այսօր հոգևորականը ներկա է վիրտուալ աշխարհում, ունի իր ասելիքը հանրությանը, սակայն ինչքանո՞վ է արժևորվում այդ ասելիքը բյուրածավալ աշխարհասփյուռ տեղեկության մեջ. այս հարցադրումը դեռևս մնում է առկախ: Այլ հարց է առաջանում, թե ի՞նչ ուղղվածություն պիտի ունենա քարոզիչը՝ պահել հնարավորինս երկար ժամանակ իրեն հետևողին սոցկայքերում, պահել նրան նոր նյութի կամ լուսանկարի ակնկալիքի մեջ, թե՞ նպատակ դնել հնարավոր միջոցներով օգնելու նրան անկախ լինել վիրտուալ աշխարհից, սովորել ավելի շատ գնահատել իրական հաղորդակցությունը, սովորեցնել իրեն մտածել, այլ ոչ թե օգտվել ուրիշի մտքերի քաղվածքներից. քարոզել ընթերցանությո՞ւնը, թե՞ ընթերցածը պատմել բոլորին. այդ որոշեք ինքներդ...

Պատրաստեց Դավիթ ուրկ. Գիշյանը

ԱՍՏՎԱԾ՝ ԱՍԵՆԱԲԱՐԻ ԵՎ ՍԻՐՈՂ

«Ո՞ւր էիր Աստված... երբ ավերում, հոշոտում էին չքնաղ մի երկիր և փրկության կանչող երկինքն էր ցնցվում»: «Ո՞ւր էիր Աստված... երբ «Քո անունը կանչող» ժողովուրդն իր զավակների սպանդը տեսնելով էր ոչնչանում»:

Ո՛վ մարդկային մտքի հանդգնություն և տգիտություն, որքա՛ն ես կուրացել...

Մարդ սովոր է միշտ փնտրել մեղավորներ, ծածկելու համար իր իսկ հանցանքները կամ արդարացնելու ինքն իրեն, խղճահարություն առաջացնել՝ մեղմելով իր վիճակը:

-Ես այս վերջին շրջանում ավելի հաճախակի էի սկսել այցելել խաղատուն, և Աստված վերցրեց իմ հաջողությունն իմ ձեռքերից... ես ամեն ինչ կորցրի...

-Ես դպրոցական տարիներից ի վեր ծնողներիս խաբելով և նրանցից թաքցնելով ծխում էի, դրա համար Աստված իմ հետ նույն կերպ վարվեց, որ ես էլ նույն ցավը զգամ որդուս պատճառով...

-Ես շատ եմ մեղք գործել իմ կյանքում, դրա համար էլ Աստված չի կարող ինձ ներել... դրա համար էլ Աստված ինձ հիմա այսպես պատժում է...

Աստված՝ անողորմ, պատժող և վշտացնող... Բայց արդյո՞ք Աստված, Ով Իր մեջ չունի որևէ չար բան և ինքնին «Բարություն» է (Ղուկ. ԺԸ 19), կարող է ցավ պատճառել նրանց, ում համար «իր Միածին Որդուն տվեց» (Հովհ. Գ 16) տանջվելու և սպանվելու: Արդյո՞ք Աստված է մեզ վշտացնողը: Արդյո՞ք նա է խլում մեզանից մեր ունեցվածքը, երբ մենք *մեր իսկ ձեռքերով* այն դնում ենք խաղատան սեղանին: Արդյո՞ք Աստված է դրդում մեր զավակներին սխալվել, երբ իրենց աչքերը բացելու առաջին իսկ օրից մենք ծխում ենք իրենց առջև և լեզվի կապանքներից ազատվելու առաջին իսկ օրից՝ օրհնության փոխարեն հայհոյանք սովորեցնում: Միթե՞ մեր իսկ մեջ բուն դրած մեղքը չի առաջնորդում մեզ դեպի վիշտ, ցավ, պատիժ և մահ (Հռոմ. Զ 16, 23): Յուրաքանչյուր թափված դառն արտասուքի պատճառը մեղքն է:

Այնուամենայնիվ, ի՞նչ մեղք ունեն այն երեխաները, որոնք մահանում են վաղ հասակում կամ անգամ չծված: Անշուշտ՝ ոչ մի:

Ի՞նչ մեղք ուներ Քրիստոս, որ մահացավ մեզ համար: Ի՞նչ մեղք ունեին Բեթղեհեմի մանուկները, որ սպանվեցին առանց որևէ խղճմտանքի (Մտթ. Բ 16-18): Անշուշտ՝ ոչ մի: Սակայն սպանվեցին ուրիշի վախից և նախանձից դրդված: Մի՞թե նրանք իրենց մահվամբ մասնակից չդարձան ողջ մարդկության փրկագործմանը և չնմանվեցի՞ն արդյոք Քրիստոսին, ով, լինելով անմեղ, ողջ աշխարհի մեղքի դիմաց ընդունեց մահն ու իր մահվամբ հաղթեց այն:

Աշխարհում բազմաթիվ անմեղներ մահանում են ուրիշների մեղավորության պատճառով, լինի դա դիտավորյալ սպանություն թե ոչ:

Այն հարցին, թե ինչո՛ւ է Աստված թույլ տալիս մարդկանց անօրենությունները, պատասխանը մեկն է՝ «Աստուած սեր է» (Ա Հովհ. Դ 8): «Աստծո սերը մարդու հանդեպ այնքան մեծ է, որ չի կարող պարտադրել ոչ մի բան, քանի որ առանց հարգանքի սեր գոյություն չունի» (Վ. Ն. Լոսկի): Աստված այնքան է մեզ սիրում, որ երբեք չի բռնանում մեր կամքին: Չէ որ անգամ «մեր ընտրած դժոխքը մեզ այդքան սարսափելի չէր թվա, որքան դրախտը, որին մենք չէինք լինի համապատասխան»:

Պատրաստեց Դավիթ սրկ. Սահակյանը

«Եվ վերջապես, զորացե՛ք Տիրոջով և նրա զորության կարողությամբ. և Աստծու սպառազինությունը հագեք, որպեսզի կարողանաք ընդդիմանալ Սատանայի հնարքներին»:

Եփես. Զ 10

«Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին. հաստատելով յերկրի զգիր կենդանի՝ հովուել զհօտ նոր Իսրայէլի. երգով քաղցրութեան՝ հնչմամբ զԱստուած օրհնեացուք»:

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՋՈՐԱՎԱՐ. ՔԱՋՈՒԹՅԱՆ ՀՄԱՅՔԸ

«Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց.
Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողայց»:
(Սաղմ. ԻԶ 1)

Հերոսական, աներկյուղ համարձակությամբ լցված Դավթի այս ձայնը հաճախ է արձագանքել քրիստոնյաների հոգիներում: Զորացել է այն, պտղաբերել և կերտել կյանքեր, որոնք շարադրված ենք գտնում այս կամ այն «Վարք սրբոց»-ում, սակայն, ինչն առավել կարևոր է, հնարավորություն ունենք վերապրելու: Հենց այդ վերապրման մեջ էլ մեր քրիստոնյա լինել-չլինելու հարցն է. վերապրել Գողգոթայից մինչև Զիթենյաց լեռ, Երուսաղեմից մինչև Հռոմ, Պիղատոսից՝ Դիոկղետիանոս, Կոստանդիանոսից՝ Աբգար ու Տրդատ. մահ, որ ծաղկում է հարությամբ:

1874 թ., Էջմիածին: Պետք է բացվեր Գևոգ Դ կաթողիկոսի երկարամյա ջանքերի պսակը՝ հոգևոր ճեմարանը: Բացման օր ընտրվեց սբ. Գևորգի տոնը, ճեմարանն էլ կոչվեց «Սբ. Գևորգյան»՝ ի պատիվ սրբի: Ընտրությունը պատահական չէր. սբ. Գևորգի շունչը պետք է զգար յուրաքանչյուր ճեմարանական, յուրաքանչյուր հայ: Ինչո՞ւ հենց Գևորգի: Ոչ միայն ճեմարանական հարկից ներս: Ինչո՞ւ ամենուր՝ Անգլիայում (1350 թ.-ից հռչակվել է այս երկրի պահապան սուրբը), Ռուսաստանում (սբ. Գևորգը պատկերված է ռուսաց պետական և մայրաքաղաքի զինանշանների վրա), Ավստրիայում (ԺԵ դարում ստեղծվել է նշանավոր Գևորգյան ասպետական ընկերությունը), Հունաստանում (Աթոսի վանքերում մինչ օրս պահվում են սբ. Գևորգի մասունքների մեծ մասը և հնամենի սրբապատկերներ), Իտալիայում (այստեղ կերտված հրաշալի սրբապատկերների մեջ աչքի է ընկնում Ռաֆայելի վրձնին պատկանող «Վիշապասպան զորավարի» գեղանկարը), աշխարհի բոլոր ծագերում սբ. Գևորգին ընկալում են որպես քաջության, վեհության և հաղթանակի խորհդանիշ, խորհրդանիշ, որը ոչնչացնում է այն բոլոր թյուրըմբռնումները, որոնք կապված են քրիստոնեության՝ թույլ կրոն լինելու, մարդուն ստրկամիտ դարձնելու հետ: Պատասխանները գուցե գտնենք սբ. Գևորգի կյանքի պատմության էջերում:

Նա ծնվել է Կապադովկիայում (Գամիրք), վաղ հասակում ծնողների հետ տեղափոխվել Պաղեստին և մտել զինվորական ասպարեզ: Աչքի է ընկել իր քաջությամբ և խիզախությամբ: Արդեն 30 տարեկանում դարձել է զորավար՝ բարձր գնահատանքի և կոմսության պատվի արժանանալով Դիոկղետիանոս կայսեր (284-305 թթ.) կողմից: Քրիստոնեական մեծանուն սրբերից շատերի վարքն ընթերցելիս կարելի է հանդիպել այս անվանը: Դիոկղետիանոսը համաշխարհային պատմությանը ծանոթ է իր հակաքրիստոնեական արյունարբու հրովարտակներով, որոնք նահատակության պսակ պարգևեցին Բարեղամ, Անթիմոս, Երանոս և այլ տասնյակ հայրապետների, քահանաների, նրանց հետևող բարեպաշտ քրիստոնյաների և իհարկե Գևորգին, որ հրապարակավ պատռում և մի կողմ է գցում կայսերական հրովարտակը՝ քրիստոնյաներին հալածելու մասին: Դեպքն, անշուշտ, անհետևանք չէր կարող մնալ:

Հաջորդ օրն արդեն սուրբը դատարանի առաջ էր: Նիկոմեդիայի դատավորը փորձում էր «դարձի բերել» քրիստոնյա զորականին, որի բացակայությունը կարող էր ճակատագրական լինել պատերազմներ մղող բանակի համար: Սակայն Գևորգն իր բոլոր հաղթանակները վերագրելով Քրիստոսին՝ աներկյուղ կանգնած էր դատարանի առջև. չէ որ «նա, ով վախենում է մարդկանցից, չի վախենում Աստծուց: Իսկ նա, ով վախենում է Աստծուց, չի վախենում ոչնչից» (սբ. Բարսեղ Կեսարացի): Նա պատերազմի դաշտում փայլել էր՝ կռվելով ընդդեմ կայսրության թշնամու, իսկ այժմ պատրաստ էր նահատակությամբ հաղթելու անմարմին բելիարին: Եվ պատիժը չուշացավ: Սակայն ո՛չ սրերն ու գեղարդները, ո՛չ բրածեծն ու սովը չսարսափեցրին քաջամարտիկ սրբին, քանի որ նրա համար էլ «կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլ. Ա 21):

Այս պատմություններն ընթերցողներից շատերը դարձի են գալիս, քրիստոնյաներին այս պատմությունները մղում են աղոթքի և բարեպաշտության: Եթե նույնիսկ դարեր անց սա ընթերցելիս մարդն ազդվում է, որքա՞ն առավել ազդված կլինեն այս դեպքերի ներկաները: Հիրավի, պահպանվել են վկայություններ այն մասին, որ սբ. Գևորգի՝ հանուն Քրիստոսի կրած չարչարանքները տեսնելով, դարձի են եկել ստրատելատներ, իշխաններ և նույնիսկ Ալեքսանդրա թագուհին: Նրանցից շատերը նույնպես նահատակվել են՝ սբ. Գևորգին պսակակից դառնալով 303 թ. ապրիլի 23-ին: Իսկ նրանք, ովքեր կարողացել են խուսափել մահապատժից, սրբոց հիշատակն անմահացրել են, և արդեն 367 թ.-ից սկսած՝ պահպանված զրույցներ, հրաշքներ, բժշկումներ ու շնորհազարդ պատումներ կան սբ. Գևորգի անվան շուրջ, որի հիշատակը տոնում ենք Վարագա սուրբ խաչի տոնին նախորդող շաբաթ օրը՝ անդադար հայցելով.

«Ո՛վ սուրբ Գէորգ, պարծա՛նք ազգի մարդկան. հրաշալի ճգնութեամբ ի յերկրի նահատակեալ և ի յերկինս պսակեալ ընդ անմարմնոցն դասս… Մի՛ դադարիր բարեխօսել վասն մեր առ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, զի յաղթեսցուք հաւատով անմարմին բելիարայ». ամեն:

Պատրաստեց Թովմաս դպ. Առաքելյանը

ՄԵՂԱ, ԿՈՐԵԱ, ՈՂՈՐՄԵԱ...

Բոլոր արարածների Արարիչ Քրիստոս թագավորն անսահման, անբացատրելի, հարազատ ծնունդն է միակ Աստծո: Օրհնյալ է երկնավոր ու անճառ Հայրդ, երկնավոր ու անճառ, որ ուղարկեց Քեզ երկնից, և որին Դու փառակից ես Քո արարչությամբ… Տարագիր գերուս փրկության համար Նա այնքան հոգաց, որ մինչև անգամ Քեզ մատնեց մարդկանց: Ուրեմն էլ ինչո՞ւ ես տխրում, ի՛մ անձ, որ քո իսկ գործով ու հոժարությամբ ես կործանվել դու… Կամ ինչո՞ւ ես դու խռովում, սիրտս… Հուսա՛ Աստծուն և խոստովանիր, և նա, անշուշտ, քեզ համար կհոգա՝ դավթի սաղմոսի և մարգարեի կենսախույս խոսքի համաձայն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի)

Բոլոր արարածներդ էլ Քո հրաշագործության արդյունքն են: Աշխարհին ուրիշ որևէ մեկի հրաշագործությամբ չի արարվել, որովհետև աշխարհից առաջ չի եղել ուրիշ մեկը: Եվ Դու ես միայն Քո բնությամբ բարի և ինչ-որ կամենում ես, կարող ես անել, ո՛չ թե Քո անկարոտ բնության կարիքների համար, այլ որպեսզի արարածներիս առանց պակասության լրացնի: Աստված մարդուն բոլոր արարածներից ավելի շատ է սիրում և ուզում է, որ նշանների միջոցով Իր անեղ բնությունը ճանաչեն, ու այդ ճանաչողությամբ սիրո բարեկամություն լինի, և մարդուն է՛լ ավելի վեր հանելով՝ Իրեն գահակից անի:

(Սբ. Եղիշե)

Բայց իմ մեղքերը բազում են, ավելի ծանր, քան ծովի ավազը, քանի որ միայն Քո առջև մեղանչեցի, ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ: Բացի՛ր, Տե՛ր, ողորմության դուռն իմ առջև, որ ողբալով աղոթում եմ քեզ, քանզի միայն Քո առջև մեղանչեցի, ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ: Իմ վրա հեղի՛ր Քո ողորմությունը, բազումողո՛րմ ու մարդասե՛ր Աստված, քանզի միայն Քո առջև մեղանչեցի, ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ:

(Սբ. Մեսրոպ Մաշտոց)

Ինձ, որ անշարժ եմ ի բարին, վերև հանիր Քեզ հետ երկինք, մեր երկրային նեխած անդամները հողի՛ր վերստին Քո գլխին: Թեև վերջինն եմ բոլորից՝ ոտքի գարշապարի նման, սակայն թող լինեմ Քո սրբերի հետ:

(Սբ. Ներսես Շնորհալի)

Ընդունի՛ր և իմ այս նվաստ վերտառությունը և արժանի՛ դարձրու հաղորդվելու մաքրափայլ ոսկենման մեկնիչներին, որպեսզի սերմերից բուսնելով և արմատներ նետելով՝ ընձյուղվենք գարնանային ժամանակում՝ հաստատուն հույսով ապաստանելով սուրբ խաչի զորությանը և ս. Աստվածածնի բարեխոսությանը՝ շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսով:

(Սբ. Դավիթ Անհաղթ)

Երկնավո՛ր թագավոր, Քո եկեղեցին անշա՛րժ պահիր, և Քո անվան երկրպագուներին պահի՛ր խաղաղության մեջ:

(Սբ. Սահակ Պարթև)

Պատրաստեց Նարեկ Գասպարյանը

ԹԱՐԳՄԱՆԻ՞Չ, ԹԵ՞ ՄԵԿՆԻՉ

Թարգմանչաց տոնը Հայ եկեղեցին այս տարի տոնում է հոկտեմբերի 14-ին: Շատերը, երբ կարդում և թարգմանիչ սրբերի մեջ տեսնում են Դավիթ Անհաղթի, Ներսես Շնորհալու կամ Գրիգոր Նարեկացու անունները, զարմանք են ապրում՝ մի՞թե նրանք էլ են թարգմանիչ, ի՞նչ են թարգմանել:



Այժմ փորձենք պարզել այս խնդիրը՝ դիտարկելով այն եկեղեցական իրականության մեջ, քանզի Ոսկեդարից սկսած մինչև նոր ժամանակները գրական գործունեությամբ, չնչին բացառություններով, զբաղվում էին միայն եկեղեցական շրջանակները: Այսպես, ուրեմն, հարկ է նախ հաշվի առնել, որ «**թարգմանիչ**» և «**մեկնիչ**» եզրերը կիրառվում են որպես հոմանիշներ: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանը «**թարգմանել**» և «**մեկնել**» բառերը նույնպես կիրառում է միմյանց իմաստը բացատրելիս, քանզի թարգմանողը նախ ստուգում է թարգմանվելիք նյութի իմաստը և ապա նոր սկսում փոխադրել համապատասխան լեզվով, և ինչպես ասում է եկեղեցական գրող Եվսեբիոս Եմեսացին՝ թարգմանիչը պարտավոր է նախ «**զմիտսն թարգմանել**»: Շատ թարգմանիչներ մեթոդ են դարձրել, ճիշտ ընկալելու համար, տեքստը (երբեմն էլ գրքի մի ամբողջ գլուխ կամ ողջ գիրքը) ամբողջությամբ կարդալը, ապա նոր թարգմանելը, քանի որ շատ բառեր որևէ գրքի համատեքստում կարող են կոնկրետ իմաստ պարունակել, որն այնքան էլ տարածված չէ տվյալ լեզվում, կամ էլ հեղինակը կարող է պայմանականորեն նոր իմաստ տալ բառին:

Անցնելով հայ եկեղեցական իրականության մեջ «թարգմանիչ» և «մեկնիչ» բառերի կիրառմանը՝ նշենք, որ բորոտին չէ, որ վստահվում էր թարգմանելու կամ մեկնաբանելու պատասխանատու գործը: Այդպես հիմնականում կոչում էին վարդապետական աստիճան ստացած հոգևորականներին: Այդ անունները բնորոշում էին որոշ վարդապետների և կարծես թե գիտական աստիճանի նշանակություն էին տալիս, որն ընդգծում էր այդ անունը կրողի ոչ այնքան թարգմանիչ կամ մեկնիչ լինելը, այլ այն մեծ իմացությունը, որը թույլ էր տալիս մեկնել կամ թարգմանել: Ըստ այսմ, մեկնիչը կամ թարգմանիչը հեղինակավոր տիտղոսներ էին: Այսօր արդեն մեկնաբանությունն ու թարգմանաբանությունը, որքան էլ որ փոխկապակցված լինեն, այնուամենայնիվ գիտական տարբեր դիսցիպլիներ են, սակայն միջնադարում՝ սկսած Ոսկեդարից, այս եզրույթները նույնական կիրառություն են ունեցել, քանի որ կարիք չկար նման ոլորտների հատուկ բաժանման: Այժմ, երբ դրանք զանազանվում են, մենք հանկարծակիի ենք գալիս, որ թարգմանիչ և մեկնիչ հայրերի հիշատակը նույն տոնի շրջանակներում է տոնվում:

Այս տոնի օրը երգվող շարականներից մեկում ասվում է. «Որ Քո երկնային գիտությունը և հոգևոր իմաստությունն առատապես ծավալեցիր Հայաստանյայց եկեղեցում սուրբ թարգմանիչների ձեռքով»: Այս տողերը հավասարապես վերաբերում են երկու խմբին էլ: Թարգմանչաց տոնը հավասարապես պանծացնում է հիշատակը սրբերի, ովքեր «լուսավորեցին Թորգոմի որդիների ազգը»:

Պատրաստեց Ծերուն սրկ. Ներսիսյանը

ԽԱՉԲԱՌ







Հորիզոնական

1. Սուրբ Ծնունդ և . . .
4. Մահվան գործիք, որը դարձավ փրկության նշան
5. Ճշմարտության չափանիշ. Աստվածաշնչի . . .
7. Փրկչի մայրը՝ Մարիամ . . .
10. Մյուռոնաթափ . . .
12. Սուրբ բաժակ, որի մեջ է լինում Քրիստոսի մարմինն ու արյունը
13. Կուսակրոնի գլխարկ
15. Եկեղեցական սուրբ յուղ. պատրաստվում է 7 տարին մեկ անգամ
17. Քաղաք, որտեղ Քրիստոս կատարեց առաջին հրաշքը
18. Յ. Վ. Գյոթեի ամենահայտնի ստեղծագործությունը

Ուղղահայաց

2. Եկեղեցու խորհուրդ. Քրիստոսի մարմինն ու արյունը
3. Աստվածային ներշնչանքով գրված գիրք
4. Այրվում է բուրվառում, աղոթքները վեր տանում
6. Երեխայի սպանություն մինչև ծնունդը
8. Քրիստոսի զոհաբերությունը. կիրակնօրյա պաշտամունք
9. Տոն՝ կապված Սիմեոն ծերունու հետ
11. Գնում ենք այնտեղ, աղոթում, Պատարագի մասնակցում, ստանում հաղորդություն
14. Խնկաբույր տարածող եկեղեցական սպասք
15. Երկրորդ ծնունդ Սուրբ Ավազանից
16. Եպիսկոպոսական լանջազարդ՝ Ամենասրբուհի
19. Կարևոր չէ ձևը, կարևորը Աստծո հետ խոսելն է

ՀԱՆԵԼՈՒԿ

Ես ստեղծվեցի Աստծո շնչով և կենդանություն առա մարդկանց ձեռքով: Եղավ ժամանակ, երբ ինձ չարչարեցին, բաժանեցին, բայց դա էլ անցավ: Ու եկավ գերության շղթան, երբ զավակներս բաժան-բաժան եղան ու ոչնչացան. ես էլի ծնեցի: Ինձ այրում էին կրակների մեջ, բայց ազգս հասավ ու հոշոտված մարմինս խաչից իջեցնելով՝ պաստառակով դրեց քարանձավ: Կորած զավակներիս գտա ու իմ մարմնի 75 զգայություններով քայլեցի առաջ: Շատերն ինձ սխալ հասկացան, դավաճանեցին աստվածայինին ու ինձ օգտագործեցին իրենց նպատակների համար: Միայն Եկեղեցու սրբերը հասկացան սրտիս խորքերը: Բայց եկավ ժամանակ, երբ եկեղեցում էլ ինձ ծաղրեցին, ինձ օգտագործեցին՝ իրենց կրքերին, իրենց գումարներին տիրանալու համար, ու Աստծո ստեղծածը ծառայեց սատանային: Երբ մուրացկան դարձա, մարդիկ ինձ ճանաչեցին, ու շատերը իմ տանջված մարմինը արժևորեցին: Ես դարձա արիստոկրատ: Մարդիկ իրենց ճոխ հավաքույթներին ինձնից էին խոսում: Ու էլի, էլի ինձ նվաստացրին: Ախր ես ծնվել էի մարդկանց համար, ոչ թե ձևերի:

Հիմա արդեն ծեր, աշխարհում հայտնի, բայց այդպես էլ չհասկացված, ես մնում եմ բոլորի հոգու փոշոտ անկյունում՝ չկարդացված ու չհասկացված ուրիշ գրքերի նման:

Հեղինակ՝ Հովհաննես դպ. Ավետիսյան